



Եթե ինքնաշխատ եք

Բովանդակություն

Սոցիալական Ապահովության և Medicare-ի հարկերի վճարում`	1
Աշխատանքից Նպաստած Միավոր	2
Ձեր գուտ հասույթի հաշվարկում`	2
Այլընտրանքային եղանակ`	3
Ինչպե՞ս տեղեկագրել հուսույթը`	4
Ընտանեկան քիզնեսի կարգավորումներ`	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Սոցիալական Ապահովության վճարներ կատարող մարդկանց մեծամասնությունը աշխատում է գործատուի համար: Գործատուն նրանց աշխատավարձից գանձում է Սոցիալական Ապահովության հարկերը, համապատասխանեցնում է այդ վճարները, ուղարկում է հարկերը Հարկային Վարչությանը (Internal Revenue Service-IRS) և տեղեկագրում է հասույթը Սոցիալական Ապահովության ծառայությանը: Սակայն, ինքնաշխատ անձինք անձամբ պետք է տեղեկագրեն իրենց հասույթը և վճարեն իրենց հարկերը անմիջապես Հարկային Վարչությանը:

Դուք համարվում եք ինքնաշխատ, եթե առանձին կամ որպես գործընկեր որևէ կոմերցիոն կամ մասնագիտական գործնեություն եք ծավալում, կամ զբաղվում եք ձեռներեցությամբ: Դուք Ձեր հասույթը տեղեկագրում եք Սոցիալական Ապահովությանը` Ձեր տարեկան դաշնային

եկամտահարկի հայտարարագիրը (federal income tax) ներկայացնելիս: Եթե Ձեր տարեկան գուտ հասույթը կազմում է \$400 կամ ավել, ապա Դուք պարտավոր եք տեղեկագրել Ձեր հասույթը SE ցուցակով (Schedule SE), ի լրումն մյուս հարկային ձևաթղթերի, որոնք Դուք պարտավոր եք ներկայացնել:

Սոցիալական Ապահովության և Medicare-ի հարկերի վճարում`

Եթե Դուք աշխատում եք գործատուի համար, ապա Դուք և Ձեր Գործատուն յուրաքանչյուրտ վճարում եք 6.2 տոկոս Սոցիալական Ապահովության հարկ` մինչև \$128,400 կազմող Ձեր հուսույթի դիմաց, և 1.45 տոկոս Medicare-ի հարկ` բոլոր հասույթների դիմաց: Եթե Դուք ինքնաշխատ եք, ապա Դուք վճարում եք աշխատողի և գործատուի համատեղ գումար, որը կազմում

Է 12.4 տոկոս Սոցիալական Ապահովության հարկ՝ մինչև \$128,400 կազմող Ձեր զուտ հասույթի դիմաց, և 2.9 տոկոս Medicare-ի հարկ՝ Ձեր ամբողջ զուտ հասույթի դիմաց: Եթե Ձեր վաստակած եկամուտը գերազանցում է \$200,000-ը (\$250,000 համատեղ ներկայացնող ամուսնական զույգերի համար), ապա Դուք պետք է վճարեք հավելյալ 0.9 տոկոս՝ Medicare-ի հարկերի մասով:

Ձեր հարկերը նվազեցնելու համար կան երկու եկամտահարկային հանումներ:

Առաջինը, ինքնաշխատ գործնությունից ստացված Ձեր զուտ հասույթը նվազեցվում է Ձեր ընդհանուր Սոցիալական Ապահովության հարկի կեսով: Նույն մոտեցումը կիրառվում է գործատուների նկատմամբ հարկային օրենքի համաձայն, քանի որ Սոցիալական Ապահովության հարկերի գործատուի մասնաբաժինը չի համարվում աշխատողի աշխատավարձ:

Երկրորդը, Դուք կարող եք Ձեր Սոցիալական Ապահովության հարկի կեսը հանել IRS-ի 1040 ձևաթղթով: Սակայն այս հանումը պետք է կատարվի Ձեր համախառն եկամտից՝ որոշելու համար Ձեր ճշգրտված համախառն եկամուտը: Այն չի կարող լինել առանձին նշված հանում և չպետք է թվարկվի Ձեր Ցուցակ C-ում (Schedule C):

Եթե ունեք աշխատավարձեր և ինքնաշխատ գործնության հասույթ, առաջին հերթին պետք է վճարեք Ձեր աշխատավարձերի հարկերը: Սակայն այս կանոնը կիրառելի է միայն այն դեպքում, երբ Ձեր ընդհանուր հասույթը \$128,400-ից բարձր է: Օրինակ, եթե 2018թ-ին Ձեր աշխատավարձերը կազմեն \$30,000 և ինքնաշխատ գործնության հասույթը՝ \$40,000, Դուք համապատասխան Սոցիալական Ապահովության հարկեր կվճարեք ինչպես Ձեր աշխատավարձի այնպես էլ Ձեր ձեռներեց գործնության հասույթի մասով: Այնուամենայնիվ, եթե 2018 թ-ին Ձեր աշխատավարձը կազմում է \$87,700, իսկ ձեռներեց գործնության

զուտ հասույթը կկազմի \$40,900, դուք կրկնակի Սոցիալական Ապահովության հարկ չեք վճարի \$128,400-ը գերազանցող հասույթի համար: Ձեր գործատուն Ձեր \$87,700 հասույթի համար կպահի 7.65 տոկոս Սոցիալական Ապահովության և Medicare-ի հարկեր: Դուք պարտավոր եք վճարելու 15.3 տոկոս հարկ Ձեր առաջին \$40,700-ի համար՝ ձեռներեց գործնության հասույթի մասով և 2.9 տոկոս Medicare-ի հարկ՝ մնացյալ \$200 զուտ հասույթի մասով:

Աշխատանքից Նպաստած Միավոր

Դուք պետք է աշխատած լինեք և որոշ ժամանակվա համար տուրք վճարած լինեք, որ հնարավորություն ունենաք Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալ: Ժամանակն, որ դուք կարիքն ունեք աշխատելու կախված է Ձեր ծննդյան ամսաթվին, բայց ոչ ոք 10 տարի ավելի կարիքն չունի աշխատելու (40 միավոր):

Եթե Ձեր զուտ հասույթը կազմում է \$5,280 կամ ավել, 2018 թ-ի ընթացքում, ապա Դուք վաստակում եք տարեկան առավելագույն չորս միավորը. մեկ միավոր յուրաքանչյուր \$1,320-ի համար: Եթե Ձեր զուտ հասույթը \$5,280-ից քիչ է, Դուք դեռևս կարող եք միավոր վաստակել այլընտրանքային եղանակի օգնությամբ, որը նկարագրված է ստորև:

Սոցիալական Ապահովության կողմից ծածկված Ձեր ամբողջ հասույթը օգտագործվում է Ձեր Սոցիալական Ապահովության նպաստը հաշվարկելու համար: Ուստի, տեղեկագրեք Ձեր ողջ հասույթը մինչև առավելագույն սահմանը՝ համաձայն օրենքի պահանջների:

Ձեր զուտ հասույթի հաշվարկում

Սոցիալական Ապահովության համար զուտ հասույթ նշանակում է Ձեր կոմերցիոն կամ ձեռներեց գործնությունից ստացված համախառն հասույթից հանած Ձեր

ծեռներեց գործնեութեան թույլատրելի պահումները (allowable business deductions) և մաշվածութիւնը:

Որոշեկամուտի տեսակներ չեն հաշվառվում Սոցիալական Ապահովութեան կողմից և չպետք է ներառվեն Ձեր զուտ հասույթի հաշվարկներում՝

- Բաժնետոմսերից ստացված (stocks) շահաբաժին և պարտատոմսերի (bonds) տոկոսադրույք, բացառութեամբ այն դեպքի, երբ դրանք ստանում եք որպէս բաժնետոմսերի և արժեթղթերի գործակատար;
- Փոխատվութիւններից (loans) շահ, բացառութեամբ այն դեպքի, երբ Դուք ծավալում եք փոխատվութիւնների տրամադրման գործնեութիւն;
- Անշարժ գույքի կապալավարձ (rental), բացառութեամբ այն դեպքի, երբ Դուք հանդիսանում եք անշարժ գույքի գործակալ կամ կանոնավոր հիմունքով վարձակալական ծառայութիւններ եք մատուցում; կամ
- Սահմանափակ գործընկերութիւնից (limited partnership) ստացված եկամուտ:

Այլընտրանքային եղանակ՝

Եթէ Ձեր փաստացի զուտ հասույթը \$400-ից քիչ է, Ձեր հասույթը դեռևս կարող է հաշվի առնվել Սոցիալական Ապահովութեան՝ տեղեկագրման այլընտրանքային եղանակի շրջանակներում: Դուք կարող եք օգտվել այդ այլընտրանքային եղանակից, եթէ ունեք ազարակային եկամուտ, ոչ-ազարակային եկամուտ, կամ համատեղ երկուսը միասին: Դուք կարող եք այլընտրանքային եղանակից օգտվել Ձեր ողջ կյանքի ընթացքում միայն 5 անգամ՝ ոչ-ազարակային եկամուտ տեղեկագրելու դեպքում: Ազարակից ստացված եկամտի տեղեկագրման դեպքում չկա որևէ սահմանափակում այլընտրանքային եղանակից օգտվելու մասով: Ահա թէ ինչպէս է այդ ամենը կիրառվում՝

- Եթէ ազարակային գործնեութիւնից Ձեր համախառն եկամուտը չի գերազանցել \$7,800-ը, կամ Ձեր զուտ ազարակային շահույթը կազմել է \$5,631-ից պակաս, Դուք կարող եք տեղեկագրել Ձեր համախառն ազարակային եկամտից փոքրագույն մասի երկու երրորդը (2/3) (ոչ պակաս 0-ից), կամ \$5,280; կամ
- Եթէ ոչ-ազարակային գործնեութիւնից Ձեր զուտ եկամուտը կազմել է \$5,631-ից պակաս, ինչպէս նաև պակաս է եղել 72.189%-ով Ձեր համախառն ոչ-ազարակային եկամտից, և Ձեր զուտ հասույթը ինքնաշխատ գործնեութիւնից կազմել է առնվազն \$400 նախորդ 3 տարիներից 2-ի ընթացքում:
- Դուք կարող եք օգտվել ինչպէս ազարակային այնպէս էլ ոչ-ազարակային տեղեկագրման եղանակներից, և կարող եք տեղեկագրել ավելի քիչ, քան փաստացի կազմում է Ձեր զուտ հասույթը ազարակային և ոչ-ազարակային գործնեութիւնից, սակայն Դուք չեք կարող տեղեկագրել ավելի քիչ, քան կազմում է Ձեր փաստացի զուտ հասույթը միայն ոչ-ազարակային գործնեութիւնից: Չուտ հասույթը հաշվառելու համար երկու եղանակներից միասին օգտվելու դեպքում Դուք չեք կարող տեղեկագրել ավելի քան \$5,280:

Հատուկ նշում. Եթէ Դուք հողագործ եք, Դուք կարող եք ամեն տարի օգտվել այլընտրանքային տեղեկագրման եղանակից: Նախորդ տարվա ընթացքում առնվազն \$400 փաստացի զուտ հասույթ ունենալը պարտադիր չէ: Ինչպէս նաև այլ համախառն ազարակային շահույթը, զուտ ազարակային և ոչ-ազարակային շահույթի գումարները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի:

Հարկային Վարչութեան 334 Հրատարակութիւն, Փոքր Ձեռնարկատերերի Հարկային Ուղեցույցը (IRS Publication 334, Tax Guide for Small Business), և IRS Schedule SE և Հրահանգները (Self-Employment Tax - Instructions)

պարունակում են լրացուցիչ օգտակար տեղեկատվություն: Նշված փաստաթղթերը կարող եք գտնել www.irs.gov կայքում, կամ զանգահարել **1-800-829-4933** հեռախոսահամարով:

Ինչպե՞ս տեղեկագրել հուսույթը՝

Դուք պետք է ստորև ներկայացված դաշնային հարկի ձևաթղթերը լրացնեք մինչև Ապրիլի 15-ը, յուրաքանչյուր տարվանից հետո, որի ընթացքում Ձեր զուտ հասույթը կազմել է \$400 կամ ավելի:

- Form 1040 (*U.S. Individual Income Tax Return* — ԱՄՆ Անհատական Եկամտահարկի Հայտարարագիր);
- Schedule C (*Profit or Loss from Business* — Շահույթ կամ Կորուստ Ձեռներեցությունից) կամ Schedule F (*Profit or Loss from Farming* — Շահույթ կամ Կորուստ Ագարակային գործնեությունից) համապատասխանաբար; և
- Schedule SE (*Self-Employment Tax* — Ինքնաշխատ գործնեության հարկ)։

Տվյալ ձևաթղթերը Դուք կարող եք գտնել Հարկային Վարչության www.irs.gov կայքում: Հարկային Վարչությանը ուղարկեք Ձեր հարկային հայտարարագիրը և ցուցակները, Ձեր ինքնաշխատ գործնեության հարկերի հետ միասին:

Անգամ եթե Դուք չունեք որևէ եկամտահարկ ներկայացնելու պարտավորություն, Դուք պետք է լրացնեք 1040 Ձևաթուղթը և Ցուցակ SE-ն (Schedule SE)՝ ինքնաշխատ գործնեության Սոցիալական Ապահովության հարկը վճարելու համար: Դա կիրառելի է նաև, անգամ եթե Դուք արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ:

Ընտանեկան բիզնեսի կարգավորումներ՝

Ընտանիքի անդամները կարող են համատեղ բիզնես վարել: Օրինակ՝ ամուսինն ու կինը կարող են գործընկերներ լինել կամ գործարկել համատեղ ձեռնարկություն: Եթե Դուք համատեղ բիզնես եք վարում որպես գործընկերներ, ապա ձեզանից յուրաքանչյուրը պարտավոր է որպես ձեռներեց գործնեությունից ստացած իր մասնաբաժնի զուտ շահույթը տեղեկագրել առանձին հայտարարագրով (ցուցակ SE), նույնիսկ եթե Դուք ներկայացնում եք համատեղ եկամտահարկի հայտարարագիր: Գործընկերները պետք է որոշեն, նրանցից յուրաքանչյուրի կողմից տեղեկագրվող զուտ շահույթի չափաբաժինը (օրինակ՝ 50 տոկոս և 50 տոկոս): Ինչպես նաև, եթե ամուսիններից երկուսն էլ ֆինանսապես մասնակցում են համատեղ սեփականությամբ բիզնեսում և ներկայացնում են համատեղ հայտարարագիր, ապա, ըստ իրենց նախընտրության, նրանք կարող են հարկվել որպես որակավորված համատեղ ձեռնարկություն և ոչ որպես գործընկերություն: Ամուսիններից յուրաքանչյուրը պարտավոր է առանձին C կամ C-EZ ցուցակ ներկայացնել:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնությունն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my Social Security account* (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10022-AM | June 2018
Եթե ինքնաշխատ եք

If You Are Self-Employed (Armenian)

Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: